



ՇԱՐԱՔԱՌԵՐԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
Կը հրատարակուի մինչև Շարաք օրեր,
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:
Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՉԱԳԵՏ .


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ

Table with 2 columns: Subscription rates and address. Includes 'Տարեկան վեցամսեայ Եռամսեայ' and 'Տարեկան 10 ֆրանք'.

Մտար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին
To the DICKRIS PUBLISHING CO., 145 EAST 23D ST, New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

Նիւ Եորք, ՇԱՐԱՔ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 5 1898.



ՓՐՕՖԷՍՐ ԱՆԻՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

Դարձեալ մահ . . .
Ազգային գիտական բուրաստանին ծաղիկ մալ ինկաւ:
Մշակ գուժեց թէ նոյն թերթի հրատարակչը և անոր հիմ-
նադրին եղբայրը Փրօֆ. Անդրէաս Արծրունի, որ քառորդ
դարէ ի վեր ինքզինքը գիտութեան նուիրած ու միանգա-
մայն մեծ զարկ տուած էր Մշակին, յետ երկարատե հի-
ւանդութեան կնքեր է մահկանացուն Սեպտեմբերի 10ին ի
Հոկտեմբերի (Գերմանիա): Փրօֆէսորի մահուամբ գիտա-
կան աշխարհը կը կորսնցունէ պահանջող մշակ մը, Հայ
ազգը՝ նշանաւոր մի անգամ, իսկ Արծրունի գերգաստանը՝
իր վերջի շառուիքը:

Հանգուցելոյն մարմինը՝ Մշակի խմբագրութեան մաս-
նաւոր կարգադրութեամբ՝ թիֆլիս պիտի բերուի Գրիգոր
Արծրունիի — գարուս Գրիգոր Լուսաւորչի — ջով ամփոփ-
ուելու համար:

Մեր խորին ցաւակցութիւնն յայտնելով իրազէի պիտ-
անկանի մահուան համար, կը ծայնակցինք այն անկեղծ
ձայնին որ կը բարձրանայ այսօր ընդհանուր Հայու-
թեան մէջէն—Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ ՇՈՒՐՁԸ

Ինչ անհաստատաժող մարդիկներ կան մեր մէջ . . .
Պարոն մը, որ Յուլիս 3ի ժողովին մէջ Սարաճեան
Սրբազանի գալտեան համար բացասական ջուէ տուած
էր մեծամասնութեան հետ, անցեալ Շարաք կրկնայ, ե-
կեղեցական ազգային ժողովին մէջ, ըսնալի կիսա ու
մեղայ կոչել ուզեց «արաջի քոյ Հայր Սուրբ»: Սա անձը
տեսնելով որ Սարաճեան Սրբազանը եկած էր, թերեւս
հաճելի թուելու համար, առաջարկեց յանձնարարութեամբ մը
կազմել՝ Յուլիս 3ի ժողովոյ վաւերական կամ անվաւեր
ըլլալը որոշելու պաշտօնով: Ինչ խեղճ ձեռնարկ: Սակայն
զարմանալին սա էր թէ այդ առաջարկն երկրորդ ող
մալ գտնուեցաւ. և քիչ մնաց որ փոթորիկ մը ելնէր, երբ
ուրիշ մը օգնութեան հասաւ ու խնդիրը սեղանին վրայ
թողել տալ յաջողեցաւ: Կը մտաբերէր որ այդ սեղանն
գերեզման մը դառնար ու այդ փձուն խնդիրը ծած-
կէր ցկատարած աշխարհի: Սակայն եթէ որոշենք թէ
անվաւեր և անօրէն էր այդ ժողով, ինչ կը շահինք.
բացասական ջուէները իրենց ընտելութենն կը փոխեն . . .
Ոսոք հասկցողներուն բարեւ:

Գերեզման ըսինք գերեզմանոցի խնդիրը մտքերնիս
ինկաւ: Շարաք գիշեր այդ գերեզմանի խնդրոյն մէջն
ալ մտանք ելանք. և վերջապէս Հոգաբարձութեան ձգե-
ցինք մեր վերջի հանգստավայրի մասին կարգադրու-
թիւն մը ընել: Ժողովին մէջ շատեր կային սակայն որք
հակառակ էին գերեզմանատուն մը ունենալէ գաղափա-
րին, որովհետեւ այդ պարոններ ընդհանրապէս երիտա-
սարդներ ըլլալով նպատակ չունէին մեռնելու:

Կիրակի օր Սարգիսի միտնար Մր. Հիւրիւրի դուստ-
րը Աւետարանական Հայոց մատրան մէջ, պաշտամուն-
քէն յետոյ, բեմ ցառակեց ու քանի մը խօսք ըսաւ Հայ-
ոց հայերէն լեզուաւ: Օրիորդը Հայաստան ծնած ըլ-
լալով հմուտ էր մեր լեզուին. Պատ. Պարնմէ շատ
աւելի ազգի կարող էր պատասանել զայն: Միտնարու-
հին իմէջ այլոց ըսաւ թէ ինք ամեն առթիւ ամերի-
կացոց խօսած է Հայերու Քրիստոնէութեան մասին, ու
գովարանած է գանոնք, և վկայեց նաև թէ Հայերը Ա-
մերիկայ գալով ուսած են ամբարիշտ ըլլալ սեղանի ե-
կեղեցիներու մէջ մանկով ևն:

Սակայն առաքելութիւն ուրիշ ժողովի մը մէջ, 2—3
ժամ վերջը միայն, բոլորովին տարբեր լեզու մը գոր-
ծածցն: Նոյն օր Քառնէկի Հօլին մէջ Միշնէրի Ալիքն
ընկերութիւնը տարեկան ընդհանուր ժողով մը կընէր՝ ի
նպատ միտնարութեանց դրամ հանգանակելու նպա-
տակաւ: Շատեր խօսեցան և երբեմն տարօրինակ բաներ
պատմեցին ժողովուրդին. և 55 վայրկեանի մէջ 100 հազար
տողալէ աւելի հանգանակեցին: Այս ժողովի մէջ խօսող-
ներէն մին էր Օր. Հուրիւր, որ շատ մը անհիմն բաներ
պատմեց Հայերու վրայ: Երբ Հուսաւորչական Հայը
ձեռքը դպցնէ եղբր Աւետարանին (աշխարհաբարին ան-
շուշտ) կերթայ անմիջապէս կը լուսացուի՝ այսպէս
թեմէ մաքրուած ըլլալու համար . . .

Ինչ պոչաւոր պատմութիւն . . . այսօրինակ բան ը-
սած ունիք: Սակայն եթէ այսպիսի այսանդակ պատմու-
թիւններ չը պատմուէին, 100 հազարի ահագին գումարը
կարելի պիտի ըլլար գոյացնել: Ինչ է նէ. անցնինք ու
ցաւինք: Այս աշխարհս անիւ մ'է կըսեն, երանի անոր որ
կը դարձնէ զայն:

Ձիմնի Քորնըր ժողովարարը ասել ձգելու սեղ շի
կար: Ժողովուրդը երեք ժամի չափ մտիկ ընելէ յետոյ՝
աւանց ձանձրանալու մեկնեցաւ գոհ սրտով: Տ. Մարգար-
եան խօսեցաւ նորէն Քալիֆօրնիոյ վրայ. պարզեց անոր
լաւ ու յոռի կողմերը: Յիշեցնոյ երթալ փափաքողներուն
պատմեց այն ամէն դժուարութիւններն որոց հարկ էր
գիմարել: Տարոնցի Գողիաթը իր հետաքրքրական նիւ-
թովն ոչ միայն հրահանգեց ունկնդիրներն, այլ իւր բազ-
մաթիւ զուարճարանութիւններով զուարճացուց զանոնք:
Մասնաւոր ուշադրութիւն գրաւող մէկը կար Ասենա-
պետին ջով նստած. զինուորական բժիշկ մէր, ամենուս
անձանօթ բարձրահասակ մէկը: Օտարական մը կարծե-
ցինք զինքը, բայց շատ ուրախացանք երբ լսեցինք թէ
Հայ մէ՛ Տքթ. Լօնկ (Երկայնեան) անունը Չիլի կազմակեր-
թիչը մը որ չորս ամիս առաջ միացած էր կանոնաւոր
բանակին, ու ակնատես եղած էր Սանթիաղոյ ահեղ
հակատամարտներուն: Տքթ. Լօնկ— որ օր մառաջ Հիւանդ
բերած էր Մօնթօքէն ու հետեւեալ օրն Քիւպա պիտի եր-
թար—կէս ժամի չափ խօսեցաւ հետաքրքիր բազմութեան,
ու շատ մը շահեկան բաներ ըսաւ պատերազմին վրայ.
Բաղդաւոց երկու կուռղ ազգերը. մասնաւոր ըրաւ ամե-
րիկացոց առաւելութիւններն, ու խրատեց Հայերը զինուոր
ըլլալ՝ ապագային օր մը ազգային զինուոր ըլլալու յարմա-
րագոյն քաջերը լինել պատրաստուելու համար:

Հայ գաղթականք օտարներու հետ խառնուելու են—
հակաճառութեան նիւթն էր այս. հաստատական կողմը
պաշտպանեց Տ. Յ. Գուրպալզեան, համալսարանական
կրթութիւն առած լեզուագէտ երիտասարդ մը, որ հակառակ
իր պաշտպանած տկար դատին, իր պարզ փաստարան մը,
պատմական, մարդաբանական, ու գիտական շատ մը
այնպիսի փաստեր մէջ բերաւ որ քիչ էր մնացեր ունկնդ-
րաց միմայն հաւանութիւնը շահէր, եթէ հակառակ կող-
մը, զոր պաշտպանեց Տ. Չարաֆօնեան, օգնութեան չի հաս-
նէր իր փաստերով:

Պատահական ճառարու մալ ունեցանք յանձին Ամրա-
կում աղա Տիւրքեանի, որ թէ և «մինչև Գործոցը» կարգա-
լու առիթ ունեցած է, բայց իւր առողջ ու անխաղախ դա-
ղափարներն շատ անգամ բարձր կրթութիւն ստացողներն
իսկ չեն պատայայտեր: Ամրակում աղա իր գրաւոր ճառով
շատ մը օգտակար իրատեսներ տուաւ, խրատներ զորս լսել
կակնկալեցք բազմամուտ ճառարտներէ: Պ. Տիւրքեան
բուռն ծափահարութեանց մէջ վերջացուց իր ճառը Աստու-
ծոյ ուղղեալ բողոքարարան աղօթքով մը:

Ու Ք. . . փառք Աստուծոյ. Նախորդ Հոգաբարձութեան
հայրենական խնդիրն լինցաւ վերջապէս. թէ ինչ կերպով,
տեղը չէ հոս պատմելու համար. միայն սա շափը ըսենք
թէ ժամանակը՝ առանց կոտի և դատարաններն ինչալու-
լուծեց կնճիւրը, ու ամօթահար թողուց այն անձը—նա-
խորդ Հոգաբարձութեան պատճառն էր եղած: Հաշուեքըն-
նիչ յանձնարարի տեղեկագրին նայելով նախորդ Հոգա-
բարձութիւնն 130 տղարի շափ պարաք կը թողու իւր յա-
ջորդին՝ վճարելու և 1301 աւելի վեղծու մեք շտկելու
համար: Լաւ չէ՞ այս՝ շնորհակալութեան ջուէ մը տանք:

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Կը խնդրենք մեր գործակալներէ որ հաճին իրենց հա-
շիւները, մինչև Տիգրիսի 50րդ թիւն, մեզ յղել, ու նոր
հաշիւ սկսիլ յաջորդ թուով:

ՕՐՈՒԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Գերման կայսրն ու կայսրուհին
ողջ և առողջ հասան Պոլիս: Տօլմա
Պաքայի նաւամասոյցը իրենց կըս-
պասէր Սուլթանը: Համալի սրախ
հատորները ցամաք կրիսնուն պէս
վազեցին անոր ձեռքերուն ու երկար
ուժգին սեղմեցին զայնս: Վիլհել-
մուհին իսկոյն թեւը տուաւ այն ճի-
ւաղին որ իրմէ շատ աւելի գոր-
վագութ մայրերու զաւակներու ար-
իւնին մէջ թաթխուած է. ու Համալի
ու կայսրուհին սիգանէմ կը յառա-
ջանան ոսկեկառքը որ կը թոցնէ գա-
նոնք պալատը:

Ամառը Պոլիսը լուսազարդուած
է: Եւտրզի մէջ խրախճանութեանց
վերջը չըկայ: Սուլթանը ու իր պաշ-
տօնեայները, մարմնացած չարու-
թիւնը, կը հրճուին որ վիլհելմ կայս-
րը, չարութեան շրջուն օգին, միա-
ցած է իրենց:

Գերման թերթ մը Համալը
«մեծ բարեկարգիչ» կանուանէ ու կը
սէ թէ թուրք կայսրը ճիշտ իրենց
կայսեր կը նմանի: Մեծ գիւտ. ո՞վ
ըսաւ չի նմանիր. մէկ խնձորէ կիս-
ուած են:

Սակայն քաղաքս լրագրութիւնը
բողոքովին տարբեր լեզու մը կը գոր-
ծածէ այս առթիւ: Նիւ Եորք Թայմզ
կըսէ յատուկ խմբագրականով մը.
«Ինչ որ ալ ըլլայ, ամօթալի փո-
խարինութիւն մըն է այս ամենն
այն քոտմեկի ծառայութեանց համար
զորս քրիստոնեայ և քաղաքակիրթ
կարծուած թագաւոր մը կը մատու-
ցանէր մարդկութիւնն առեանգելու
և պղծելու համար»:

Ճիշտ այն պահուն երբ Համալը
իր հիւրերը կընդունէր, անդին «բա-
րեկարգիչ» մայրաքաղաքէն քիչ մը
հեռու, Գնիսիայի (Պրոն) մէջ, եօթը
թուրքեր հրապարակաւ կիրառան
հանց Ասազը. կառավարութիւնը ի
պատիժ իրենց դործած խժժու-
թեանց: Եւ երէկ թուրք գործերը
կրէտէն դուրս ելան:

Սուլթանի հիւրերը թո՞ղ միւր-
թարին զինքը. կրէտէն ալ գնաց:

Անկու-Յրանտական պատերազմի
մը երկիւղը կը մնայ երկիւղ տակա-
ւին լրագրիւններու մէջ. կը թուի թէ
Յրանտա սեղի պիտի տայ Յաշ-
տաի խնդրոյն մէջ:

Գերման կայսրուհին, որ իրեն քա-
ղաքական պաշտպան Չարք ունէր,
այս շարթու իրեն գլխաւոր մըն ալ
ընտրեց՝ ծերունի Լի Հունկ Չանկի
հետ ամուսնանալով: Սակայն չի կար-
ծուիր որ կայսրուհին պիտի կրնայ
իր ծածկերը ազատել ձօն Պուլի ձեռ-
քէն: Սուլթանի կառավարութիւնը
կէս վերջնազիր մը տուած է Ձին
կայսրուհին որով կը պահանջէ կայս-
րին զահէր նորէն երկը: Հարկ չը
կայ ըսելու թէ այս վերջնազիրը ա-
ւելի իտալոյ ուղղուած է քան Ձի-
նաստանի: Տեսնենք մինչև քանի մը
օրէն հոգ. պատերազմի փոքր Ափ-
րիկէի թէ Ձինաստանի խորքէն պի-
տի հնչէ:

Սնցեալ շարթու Սուլթանին
ներկայացաւ Պոլսոյ ամերիկեան նոր-
երթ գետպանը. ընդունելութիւնը
սիրալիք եղած է: Սուլթանը ըսած է
գետպանին թէ իր պաշտօնավարու-
թեան միջոցին թուրքիոյ և Ամերի-
կայի մէջ սերտ բարեկամութիւն պի-
տի մշակուի:

Գետպանը գնաց գրամ ուղեւու
Սուլթանէն, Սուլթանը բարեկամ-
թիւն կուտայ: Թ. Չ.

ՇԱՆՈՒ ՊԱՅՍԸՔԸ

Գործածուած պայսըքը մը, շատ
աժան: Դիմել— 628— Յրգ Ս. վընու:

ԱՐՔԻԱՐԻ ԽՆԴԻՐ

ՎԱՐԱԳՈՒՐԻՆ ԶՈՒԹԵՐԸ

ՏԻԳՐԻՍԸ բողոքովին անկող-
մնակալութեամբ բացաւ իւր սիւնակ-
ները ազգային զրոյարտիչները ու
իրական յանցաւորները երևան հանե-
լու միակ նպատակաւ . Պ. Լեւոնեան
այս սիւնակներուն մէջ զրպարաու-
թեան վարազուրին մէկ ճոթը ու մի-
ւս ճոթը յաջորդաբար վեր վերցուց,
որոնց ետեւ ու է բան չը կրցի նըշ-
մարել . շատ հետաքրքրուեցայ իմա-
նալու համար թէ արդեօք բողոքո-
վին անկողմնակալ և քիչ շատ ինք-
նի տէր անձինք բան մը կրցած էին
նշմարել Պ. Լեւոնեանի վեր առած
վարազուրի երկու ճոթերուն ետեւ
թէ ոչ . ամենէն ալ «ոչ» պատասխանը
լուցի . կը խնդրուի Պ. Լեւոնեանէ որ
այս անգամ վարազուրի վերի երկու
ճոթերը վար առնու . մի գուցէ ա-
նոնց ետեւ լինի իւր գիտցածն ու այս
խնդրով հետաքրքրուող անձանց
փնտռածն : կը զարմանամ թէ ինչու
Պ. Լեւոնեան և իւր ընկերք խնդրին
այդպէս կը քաշքշեն ու իրենք զի-
րենք այդ օճապարտ ու անկ ճամ-
բուն մէջ կը ձգեն : խնդրոյն մի ան-
գամ ընդ միշտ վարձան մը ստան
շատ դիւրին է . դուք . Դաշնակցա-
կաններդ իբրև դատաւան ու մատ-
նիչ կը ճանչնաք զԱրքիար , և ունիք
ձեր ձեռքը զայնս հաստատող շատ մը
զօրաւոր Տօգումաններ . այսօր Ար-
քիար քաղաքը ընկերական տանի
մը առջև դատուի կը պահանջէ մահ-
ուան պատիժի իսկ պատրաստ լինե-
լով . եթէ Դաշնակցականներդ այ
այդ քաղաքին ունենալով ընկե-
ական տանի մը կը կազմուին ընդ ու-
նիք , հոն կը վերջանայ ամեն բան ու
հարկ չի մնար ամեն շարժու ՏԻԳ-
ՐԻՍԻ սիւնակները լեցնել , ուսկից
արդ ինք չի գար և ինչդ իրն
կը մնայ միշտ ինչպիսի :

ԻՆՉՈՒ «ՏՕԳՈՒՄԱՆՆԵՐ»

Արքիար ճակատարաց հրապարակ
կողմէն ու պատուոյ ատենան կը
պահանջէ , յանձն առնելով մահ-
ուամբ պատուօթիլ երբ յանձնուոր
գատուի : (Կ . Յ . Փափազեան , ՏԻԳ-
ՐԻՍ ԹԻՒ 43 :

Այս առաջինը չէ , ոչ ալ թերևս
վերջինը կը լինի : Եմանօրինակ յայ-
տարարութիւններ ստիկ առաջ ալ ե-
ղան և չը գործադրուեցան :

1897ի ձմրան օր մը Ս. մերկայի
չնչակեան Նահանգային վարչու-
թեան անդամ Պ. Գ. Չիթեան լինի
մէջ բեմէն կազմակերպ — Արքիար
խոստացած է կեդրոնական վարչու-
թեանէն հրաժարիլ , եթէ Դաշնակցա-
կաններ այդպէս պահանջեն : — Պ.
Վահանեան երբ լսեց ըստ . — Մի
հաւատաք , եթէ Արքիար ստանկ
բան մը ընէ , ևս առաջինը պիտի լի-
նիմ անոր ճակատը պահողներէն , և
ձեռքը սեղմելով պիտի ըսեմ , քա-
ւեցիր առչի յանձնաքննիչ : — Ս. յն
սանե տակաւին կը հաստայի թէ կա-
րելի է որ իւր հազարն այդպիսի
բան մը ընէ . բայց այսօր կը ըսեմ
սուտ է : Նոյն իսկ եթէ Պ. Արքիար
գիտնայ թէ իր հրաժարելով ազգը
կազատի իր առաջի հարցումը պիտի
ըլայ — Լաւ , հրաժարիմ . բայց ազ-
գը ազատուելէն վերջ զիս կտա-
վարիչ կընտրէք , կամ գէթ ապ-
րուստս կուտաք : Ս. յն մասին տե-

սէք ձանկերէն «Դիմակաւորները :
Նոյն իսկ Արքիար ինք 1897 Յու-
նիս 7ին կընէր . « Իմ անձիս վրայ
խօսք ըլլայ և միութեան գործը ա-
ռաջ տանելու համար իմ քաշուիս
օգտակար սեպուի , անմիջապէս կը
հրաժարիմ : (Տես Մարտ ԹԻՒ 8ը)

Դաշնակցութիւնն անոր «անձին
վրայ» խօսք ըրաւ , բայց էֆէնտին ոչ
միայն չը հրաժարեցաւ հապա ելաւ
գրեց «Չնչակեան կուսակցութեան թշ-
նամիներն էին (Դաշնակցականներ)» ե-
նն : Իմ գլխուս վրայէն կուսակցու-
թիւնը հարուածել իրենց նպատակն
էր : (Մարտ ԹԻՒ 6)

Բայց մէկ կողմ թողունք ստոնք ,
և տեսնենք թէ ինչու շորս կողմէն
եղած բազմաթիւ ամբաստանու-
թիւններուն չը պատասխաներ էֆ-
էնտին , և միայն ու միայն աօզու ման-
ներու ետեւէն կը վազէ , ան ալ ճան-
կերէն ժընէֆէն վերադառնալէն
վերջ : Խնդրեք ստոնք է :

Արքիարի ըսածին նայելով ինք
1895 էն ի վեր գիտէր թէ Դաշնակ-
ցութիւն այդ «Տօգումաններ» ձեռք
անցուցած էր . բայց դուրս չը հանց-
իսկ երբ տեղեկացաւ թէ Դիւրապի
լամբարութեան քով իսկականի
թարգմանութիւնը կայ , ինքն իրեն
ըստ , «էհ , ա՛տ է եղեր . ազատուե-
ցանք ուրեմն : Ատենի կը կանչեմ ,
Տօգումաններու համար կըսեմ կեղծ
են , չիմու են . իսկ եթէ պատահի
որ ձեռագիր ստորագրութիւնս ալ ե-
րևան բերեն , կըսեմ նմանցուցած են
ու կազատիմ : Ասկէ դիւրին ի՞նչ կայ :
Դէհ , քեզ տեսեմ , գրիչ , ըստ ու
սկսեց գրել . Թայմըլը երբմի հրատա-
րակեց Բարնէլի թուղթեր , նոյն իսկ
Բարնէլի ձեռագիրները : Բարնէլի դա-
տարանի դիմեց և հաստատուեցաւ
որ Թայմըլը հրապարակ կեղծարարնե-
րու գոչ դացած էր : — (Մարտ)

Հիմա ինչու չէ ճամբան կը յարդարէ .
բայց ժողովուրդ իր օճիքը չը պիտի
թողու , և դաշնակցութիւնն Տօգու-
մաններ այն ատեն երևան պիտի բերէ
երբ Արքիար էֆէնտի իր ճակտի միւս
բիծերը մաքրէ և միայն այդ խոշոր
բիծն մնայ :

Հրամայէ՛ պատուոյ ատենան , էֆ-
էնտի , հրամայէ՛ չափուիք :

Մ. Ս. ԼԵՆԻՆԵԱՆ

ԸՆԹԻՐԵՑՈՂ ՊԱՐՈՆՆԵՐ

Չարագացած ազգերու մէջ լրա-
գրութիւնը մեծ տեղ կը բռնէ : Գոր-
ծաւորն , գործատէրն , մշակն , ա-
ղան , ծառան ու տէրն ամենքն ալ
կը կարդան : 8—10 տարեկան մա-
նուկներն անգամ լրագիր կը գնեն և
կը կարդան : Երկաթուղիով կամ կառ-
քով ճամբորդած միջոցիդ և նոյն իսկ
ճաշի ժամանակ ամերիկացի գործա-
ւորն իր լրագիրը կը կարդայ : Ատոր
հակառակն , մենք Հայերս լրագիր
կամ երբէք կարեւորութիւն չենք
տար և կամ միայն այն ատեն լրա-
գիր կը կարդանք երբ ձրի կը տրուի
մեզի :

Ամերիկայի Հայոց մասին խօսե-
լով պէտք է ըսել երեք կարգի կը
բաժնուին . Ա . վճարող դասակարգ ,
որոնք շատ քիչ են և ընդհանրապէս
ստատաձեռն . ոչ միայն թերթ կը
գնեն , այլ ամեն բարի ձեռնարկու-
թեան կօգնեն երբեմն նոյն իսկ իրենց
կարողութենէն վեր : Բ . Ուրացող-
ներ , որոնք կը վերաբերին աւելի
ուսեալ դասակարգին . կուզեն կար-
գալ , բայց բաժնեգիրն վճարել չեն
ուզեր . կամ կանկալեն որ իմբա-
գիրն ձրի չըլլէ , կամ անկէ անկէ
կը մուրան թերթը : Ատոնցմէ շատեր
լամբարին կը գրեն — Ձեր թերթէն
օրինակ մը մեզ զրկեցէք . բայց երբ
կուզայ բաժնեգիրն , ո՛չ թերթին մէջ
եղած յայտարարութիւնը չ . ո՛չ ալ

լամբարութենէն ուղղակի գրուած
նամակները մեր պարոնի քակը բա-
նալու կը գորեն : Գ . անտարբերնե-
րը . որոնք եթէ ձրի թերթ տեսնեն
կրնայ ըլլալ թէ քիչ մը վրան նային ,
եթէ ո՛չ , ճաշարաններու մէջ կը հաւ-
աքուին կը պոռան , կը կանչեն , եր-
բեմն ալ կը հայհոյեն կը կուռին : Ահա
այս է մեր ընթերցող պարոններու
որակը :

Այնպիսով կը հասկցուի թէ իմ-
բագիրներ , ինչ՞եք կը քաշեն :
Պոսթոն . Հոկ . 10 ԱԳՏԱԿ

Մ Ա Ն Ր Ա Ն Ո Ւ Ր Ք

Չեծելագորաց Երգ Զօրարանակի
անդամներէն Մովսէս Թարգմանի
հրահանգ ըլլալու համար արձակուր-
դով քաղաքս եկած է :

— Սըմիթէն կը լսենք թէ անց-
եալներն քաղաքական պատկով 45—
50 տարեկան Արարկերցի Բարնակեան
անուն մէկը ամուսնացեր է 18 տա-
րեկան Գերման աղջկան մը հետ :
Արարկերցի Սըմիթ զրկուած նա-
մակներ կը ծանուցանեն եղբր սա-
կայն թէ այս մարդը կին և 12 տա-
րեկան դուստկ մը ունի Հայրենիք ,
և թէ երկար տունէ իվեր գրած չէ
եղեր անոնց : Սըմիթի Հայ գաղութը
անպատուելի վարնալով այս
գաղտնիքը երևան չէ հանած ցարդ :
Սակայն յանցաւոր ինչպէս պիտի
կրնայ իր նորժառի պատիժը կրել եթէ
ճշմարտութիւնը երևան չըլլէ :

— Յակոբ Ս . Կիրակոսեան , որ
12րդ Զօրարանակին հետ կրնի Մուր
(Լօնկ Այլընտ) գնացեր էր նշանաձը-
ութեան համար , հարիւր յիսուն
զօրքերու մէջ ինքն ամենէ առաջ
հինգ անգամ շարունակ նշանակեալին
զարնած ըլլալուն համար պատուա-
նշան մը ստացած է :

— Ձիթակօէն կը գրեն մեզ մի քա-
նի պատահական թղթակիցներ թէ
Մաշթոց վարդապետ նոյն քաղաքի
Հայոց իբր պաշտօնական ներկայա-
ցուցիչ չէր եկած Սարաճեան սըր-
բազանը դիմաւորելու համար , այլ
իւր հաշուոյն եկած էր իւր անհատա-
կան ծախքով , և թէ Հայրսուրբ
«Բըլէրճի Թիթէթով» ճամբորդելու
հրաման առած ըլլալով կէս գին մի-
այն վճարած է եղեր ճանապարհա-
ծախսի համար :

Վարդապետի դրամը ազգի դը-
րամն է . կէս գին վճարելը՝ ձրի գալ
չի նշանկեր :

Տ . Մաշթոց վարդապետ արդէն
մի և նոյն իմաստով հերքում մը
գրած էր մեզ անցեալ օր :

— Թղթախաղը (խուճար) կը յա-
ռաջադիմէ . բողոքները այս անգամ
Փրօվիտէնէն կու գան . Զօքսթընի
Հայոց ճաշարանին մէջ գիշերներն ու
կիրակի օրերն Ուոխիք այս գործով
կը պարապին եղեր :

Տեղուցն Հովուին ուշագրու-
թիւնը կը հրաւիրենք .
— Վառնայի թերթերը «Փուլընէն»
առնելով կը ծանուցանեն թէ Մաշ-
թոց վարդապետ՝ հակառակ ըլլա-
լով կուսակցութեան՝ ամուսնացած
է եղեր : Կատարեալ սուտ մ'է այս
որ կը թուի թէ ծնունդ առած է
անխիղճ զրպարտիչներէ :

— Տ . Ա . Ալէոն , որ 8 տարինեղէ
ի վեր կրնալէն կեան վաճառատան
մէջ կը ծառայէր , վերջերս ձգուած է
իւր գործէն :

— Տ . Վահրամ Գահանայ կը լսենք
թէ պաշտօնական եղած է՝ Հոգաբար-
ձութեան վերջի ժողովին մէջ :
— Այսօր Սարաճեան Եպիսկոպոս
Ուսթըր կը պնդի Մաշթոց վարդա-
պետի ընկերակցութեամբ :

— Ուսթըրի Ս . Փրկիչ եկեղեցոյ
պարտքը բոլորովին վերցնելու հա-
մար Եպիսկոպոսը հանգանակութիւն
մը բացած է բարեկեցիկ դասակար-
գի մէջ : Քաղաքիս մէջ կը լսենք թէ
մեծկակ դուճար մը հանգանակած է
ցարդ : Խրիմեան Հայրիկ §100 նուր-
ած է այս նպատակաւ : Սարաճեան
Սրբազան §750ի չափ Եւրոպայէն բե-
րած է՝ Մանչէսթըրի և այլ քաղաք-
ներու ազգայիններէն հանգանակ-
ուած :

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ս . Գ . Գ . Շիթակօ — Ձեր թերթը
կը զրկուի : Ձեր ուզած գրքերը գըտ-
նելու դիւրութիւն չունինք :

Ս . Կ . Ուսթըր — Շնորհակալ ենք :
Առանց կողմնակցութեան կը քնադա-
տենք ինչ որ քննադատութեան ար-
ժանի գտնենք :

Պ . Ս . Տօլ . Բիւլըր — Ձեր նամակը
մեր գործակալին զրկած ենք ի պարտ
ու պատշաճ տնօրինութիւն :

Նորայր , Ուսթըր — Շնորհակալ
կըլլանք : Պաշտօնեաններու մասին
գրելու ժամանակը անցած է .

Գ . Տ . Գ . Մանչէսթըր — Ձեր զըր-
կածը հասած է մեզ .

ԱՁԴ

Նիւ Եօրքի Հ . Ե . Թանգարանի Մուրթ .
145 իսթ 23րդ փողոց

Թանգարանը բաց է ամեն երեք-
շաբթի , Հինգշաբթի և Շաբաթ երե-
կոյններ ժամը 7½ էն մինչև 10ը : Իսկ
կիրակի օրեր կէս օրէն յետոյ ժամը
1էն մինչև 5 : Թանգարանին մէջ կը
գտնուին ամեն տեսակ գրքեր , հան-
դէսներ և օրաթերթեր : Թանգարա-
նը կը վաճառէ Հեզարան , Մայրենի
Լեզու , Մենտորանգը . Լեզուի և Բա-
Ֆֆիի բոլոր գործերը : Թանգարանի
բաժանորդագրութիւնն է սարին § 1 :
Կիրակի օրեր փափաքողաց Հայ-
րեականութեան և թուրքաբանու-
թեան գտներ պիտի աւանդուին : Ա-
մեն Հայ իրաւունք ունի Թանգարա-
նին մէջ կարգալու թերթ , գրք ևն :
Թանգարանապէտ
Ղ . ՊՕՅԱՃԵՆ

ԿՈՒՋՈՒԻ

Ընկեր մը իմ սափրիչի խանու-
թիս համար , որոյ կէս բաժինը կու
սամ 52 տոլարի : Դիմել մանրամաս-
նութեանց համար առ Մ . Սիմոնեան ,
5 կրին ըսթրիթ , Ուսթըր , Մասս :

ՂԱՋԱՐ ԽԱՆԱՆՆԵՐ

Հնարիչ և հեծելանի շինող
կը կարօտի դրամագուլու ունեցող մի
Հայ ընկերի՝ միատեղ Եփրատու երթա-
լու և հոն ամերիկեան պայտիքներ
շինելու համար : Մեծ սպարաէզ ունի
այս ձեռնարկ . կրնանք գործ ընել
Յունաստանի , Կրէտէի և ուրիշ եր-
կիրներու հետ : Դրամագուլուի կը
կարօտիքը հարկաւոր մեքենաները
գնելու և Եփրատու տանելու համար :
Մեր հասցէն է 12 Իւնիլը ըսթրիթ
Պոսթըն , Մասս :

Տիգրան Միրիճանեան , որ կը գոր-
ծէ եղեր ի Ֆաթթըրիվիլ (Փանսիվա-
նիս) կարեւոր նամակ մուրի խաղ վար-
գապետի քով : Հասցէն զրկել մեզ :

Տիվրիկի Խորնալիլ գիւղէն Օվքեան
Պապիկ , որ Ձեքուկոյի արուեստանա-
գիտի ատեն Ամերիկայ եկած է , կը
փնտռուի Օվալիմ Կօչեանէ (Թիւ 152
Մարթէթ ըսթր . Լօվէլ , Մասս .) որ
կարեւոր գրելիքներ ունի իրեն իւր
(Պապիկի) ծնողաց մասին :

Ակնայ Ապուշէի գիւղէն Կարա-
պետ Տարիանեան անուն 16-17 տա-
րեկան անձի հասցէն կու գուր Անդ-
րիպէն : Կարապետ երկու տարիէ ի
վեր Ամերիկայ կը գտնուի : Գիտցող-
ներն հաճին գրել մեզ :

ՊՈՒԼՂՈՒՐԻ ՄԻՍՏԵՍԻ ԸՆԿԵՐՈՒԹ՝ BULGUR MANUFACTURING CO.

161 Union St, WORCESTER, MASS. Կը ծանուցանեն թէ երկարատե փորձառութեան շնորհիւ իրենց շինած պուլըրը մեծ ընդունելութիւն գըտած է ամէն տեղ: Առանց քարի և անախորժ հասի Պուլըրը ամէն հայ տունէ կը փնտառուի: Մենք, որ միակ Պուլըրի գործարանն ունինք այս քաղաքի մէջ, մեր բոլոր ժամանակը տուած ենք անոր յարողութեան համար: Մեր յաճախորդքը եթէ գոհ չի լինին մեր ապրանքներէն զրամին ետ կը արուի, թէև ցայսօր ոչ մի հայ ազգուցի թիւն յայտնած է: Մեզ համար կը վկայեն հայ տիկիները:

Պուլըրը լիպրան կարծէ 3 1/2 սէնթ խանութներու և ճաշարաններու համար: Իսկ տուններու համար 4 սէնթ: Յանձնարարութիւն ճշգրիտ կը կատարուին: Փոխադրութեան ծախքը գրեթէ զրոյն վրայ է:

ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ ԹԱԿՐԻՆԻ ԵՒ Պ. ԵՐԱՐԵԱՆ 210 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք

Երկու ընկերներն ալ արհեստով խոհարար ըլլալով, կը վստահացնեն ժողովուրդը թէ պիտի կրնան կատարելապէս գոհ ընել իրենց յաճախորդները: Հոս պօրտ չի կայ, վստահի սովորական գներով պօրտ պահող ճաշարան մը, մեր համոզումն է թէ թարմ միս ու ընտիր նպարներ չէ կարող գործածել: Կերակուրի մէջ մի անակը կարծէ 10 սէնթ միայն: \$3.50 թիքէթը կարծէ 3 տոլար: Փորձեցէք միանգամ այս նոր ճաշարանին արժէքը հասկնալու համար:

ԺԱՄԱԳՈՐԾ

Գիտէ՞ք որ ժամացոյց մը բանելով չի հինար. այն ժամանակ կը ոչնչանայ ժամացոյց մը երբ անոր մէջ պզտիկ խանգարում մը չի տակաւ շատ փորձառու չէ արհեստին մէջ:

Մենք 15 տարուայ փորձառութիւն ունինք: Կը նորոգենք ամեն կարգի ժամացոյցներ ածան գներով: Դիմել—307—3րդ Ալլընի:

(Սահիրէլի խանութը) Ս. Երեցեանի:

ԵՐԿՆՍՅԻՆ ԼՈՅՍԵՐ

Գրեց Պատ. Յարութիւն Ֆրիւան. Այս քարոզարքէն ունենայ փափաքողները կրնան մէյմէկ օրինակ ձրի ստանալ զիմեով վարը Գրքի մը հասցէին: Ուրիշ քաղաքներէ գրելու մը ընդունել պարտին 9 սէնթի ըսթէ մը զրկել ծախսը համար: 50 Չամախան, 400 4րդ ալլըն, Ն. Եորք

ՊՈՒԼՂՈՒՐ-ՊՈՒԼՂՈՒՐ-ՊՈՒԼՂՈՒՐ

ՊԱՆՏԱՍԻ ԹԱՇՅԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

B. TASHJIAN & Co., 53 MAIN ST., BANGS COURT, WORCESTER, MASS.

Կը ծանուցանեն արգայ հասարակութեան թէ իրենց փայտի գործը յաջողցնել վերջ հաստատուած էր մի պուլըրի և ծեծածի գործարան մը վերջիլու ածան առակ: Այս գործարանի մէջ պրոպագանտաւ ապրանքներն ոչ միայն զիւրաւարտելի գներով կը վաճառուին, այլ և մաքուրութեան ու տեսակի կողմէ անհամեմատ քաղաքի և արտերի:

Պատմութիւններու համար իտար կամ մանր պուլըրի փոստեր կրքը 3 1/2 սէնթ: Տուններու և ճաշարաններու համար զիւրաւարտելու արտը նորապէս արտուած է մինչև 25 փոստի նմանակութեամբ ապրանք վաճառել:

Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնը փոխով և ճշգրիտ կը կատարուին: Փորձեցէք անգամ մը և գոհ պիտի մնաք:

Վճարումներն կանխիկ կը լինան: Ծանապարհի ծախքը գնողին վրայ է:

ՊՕՍԵՐՈՒ ՔՄՀԱՃՈՅԷԼ և ԱՉՍՏ

Եղբայրներ հայրենիք երթալուն համար մեր ներքու կողակարի խանութներէն (Երկրէջիկ) մին վաճառել կուզենք զիւրաւարտելի գներով, արհեստին տեսակներով սորվեցնելու պայմանաւ 6 Մանրամասնութեանց համար զիմեկ:

ԲԱՐԵԱՆԵԱՆ, ԵՂԲԱՐԲ 706 Shawmut Ave., Boston, Mass.

ԹԱՇՅԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱԳՈՐԾ ԵՒ ՄՍԱՎԱՃԱՍ 573-579 ԲԷՅՄՊՐԻՃ ԸՍՊՐԻԹ ԲԷՅՄՊՐԻՃ, ՄԱՍՍ.


Պատիւ ունի ծանուցանել արգայ հասարակութեան թէ իւր պարտատուած հացը թէ՛ գին և թէ՛ տեսակի մասին չէ կարելի գերազանցել: Ո՛չ կը վաճառուի ոչ ալ թիքէթ 1 փոստ հացը 3 սէնթ միայն կարծէ: Միայն միշտ թարմ է ու գները գոհացուցիչ: Կը վաճառուի նաև ամուր, քարիւղ և կաշուէլիք փայտ: Ունի ստանձին ճաշարան մը կցած յիշեալ ձրի գերունք ուր կը պատրաստուին ընտիր կերակուրներ: առտու և ածան: Մասնաւոր կտուր ունի ազնի փոխադրելու համար խիստ քսած գնով: Փրքեցէք անգամ մը:

ՊԵՏՐՈՍ ՎՍԻՍՅԱՆ ԵՒ ԵՈՎ ՀԱՆԷՍ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Թիւ 164 Իսթ 27րդ փողոց, Նիւ Եորք Նոր Կարգադրութիւն, Նոր Վարչութիւն և Նոր ճաշարան Պատիւ ունին ծանուցանել հասարակութեան թէ ամուր 7 1/2 սէնթ գներով ու բոլորովին կերպարանափոխ րրած են այս ճաշարանն: Ներքին վարչութեան տեսակաւ: Սոհարարութիւն, մաքրութիւն, գործածուած թարմ միս և նպարեղէններու տեսակն յստակ են թէ պիտի գնահատուի ընդհանուր ժողովրդէն: Բայց յստակ ըլլալու համար թէ ամենին առաջնակարգ և գոհացուցիչ է այս ճաշարանի մէջ, կը հրաւիրուին ազգայինք փորձել գէթ մի անգամ:

ՄԱՆՈՒ ԽԱՆՈՒԹ

Ա. Պետոյան կը ծանուցանէ թէ իր Մուրնի մէջ ունեցած գործը պիտի վաճառուի հայրենիք վերադառնալ որոշած ըլլալուն համար: Իր վաճառելիք ապրանքներն են նպարեղէններ, շաքարեղէններ, ծխախոտ, փուռ մը, ճաշարան մը, ձի մը և երկու կտուր: Բուսական ամերիկացի յաճախորդներ ունի այս գործը: Դիմել 38 Ալլընըր Ըսթրիթ, Մուրնի, Մասս.



Ա. ԹՕՓՈՒՉԵԱՆ

ԿՕՇԿԱՎԱՃԱՍ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ

Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք

Այս խանութին մէջ կը վաճառուին ամէն տեսակ կոշիկներ խիստ ածան գներով: Մեր հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք: Նոր ապարտուած կոշիկներ կը կարենք ձեռնարկ և վայելուչ կերպով կը նորոգենք հին կոշիկներ շափաւոր գներով: Ուրիշ մը երթալէ յառաջ ինձ եկէք անգամ մը: Եւ վստահ եղիք որ շատ գոհ պիտի մնաք: 239 Իսթ 26րդ փողոց Արանց կոշիկներ \$1.25 և մինչև \$5.00 Կանանց \$1.25 և \$2.50 Տղայոց և աղջիկներ \$0.50 և \$1.50

Հ Ի Բ Զ Օ Լ Ա

ՄԱՋԻ ԴԵՂ



Կը զօրացնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը գաղտնեցնէ: Կը բազմեցնէ նաև մորթի հիւսնագութիւնն ու կը մաքրէ թիւփերը: Միանգամ փորձելու առաջին և քանակ և սաղմունք արժէքը 3 քարէթ: Գրեց Պատ. Յարութիւն Ֆրիւան, որ արևելեան խոտերէ պատրաստուած է յոյժ հաճելի մի հատով: Կը ծախուի քաղաքի զեղազօրներու ընդ: Դիմել 50 Ալլըն միայն:

Կարելի է ստանալ նաև ՏԻԳՐԻՍԻ

րևկերութեան:

Կը վաճառուի նաև Տ. Յ. Բարակեանի ըրով, թիւ 45 Էքսչէնճ Ըսթրիթ, Ուսթըր, Մասս:



AMIN MERHIGE & Co.

29 BROADWAY, NEW YORK, Room 212

ՄԵՄՈՒԲԱՆԱԿ (ՀՕԼԵՂ) ՎԱՃԱՍԱԿԱՆԲ

Արևելեան և Տաճկական Ապրանայ Այս վաճառատունն իր տեսակին մէջ ամենամեծն է ինչու Եորք: Հոն կը վաճառուին ամեն տեսակ ստեղծագործներ, սեղանի, մէնթըլի, փիւսոյի և ն. մետաքսայ և սոկեթել ծածկողներ, Դամասկոսի վարագոյրներ, Բերիսի ազապանի, քիֆիս, ևն. ևն.:

Հայ վաճառականք կը հրաւիրուին փորձել միանգամ: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք փոխով և խնամօք կը կատարուին: Դրեկին շափաւոր և ապրանքներն լաւագոյն լինելով, ուրիշ ունէ տուն չէ կարող մըջիլ այս տան հետ:

MARK C. MEAGHER


St. Paul Building, No. 220 Broadway, New York City.

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿՍԼՈՒՍՄ ՄԵՏԱԳՈՅԷԼ ԵՒ ԵՈՐԲԻ ՄԵՋ

\$1.00

Շարաթական արժէքը 1 Մուրնի 2 ի Փարքը որ Մեծագոյն Նիւ Եորքի աշխարհագրական կեդրոնն է Յըլընի կից: Սա տեղը ծղիլ մակերեսով է 120 ոտք բարձրութիւն ունի, ուր 34րդ փողոցի Ֆլորիէն Էլիզ ակնիով կերթցուի 19 րոպէէն:

Այս Հողերը տեսնել փափաքողներուն երթելու ժամանակ արժէքը կը արուի: Երթալու ուղղութիւն ամեն Հինգշաբթի և Կիրակի օրեր, Կէս օրէ վերջ ժամը մէկ ու կէսին, ներկայ գտնուելու են Լոնկ Ապրիլի Ֆէրիլի առջև, Երթ 34րդ փողոց ու պիտի կրնան տոմս ստանալ Տ. Ս. Եարաթեանէ, որոյ հասցէն է 298 Ուէսթ 12րդ փողոց:



Մար խիստ յարմար է յ շին զիցիկ տեսարանը հրապուրէ զձեզ հաճիք այցելել Հիմայ հոն հաստական զբայներ և այլն և այլն:

Բնակութեան համար վայր մընէ փարք, որուն գերանկանարարութիւնն մի անգամ այս վայր: Կան սարակց ու անրոցներ, եկեղեցի:

Մար խիստ յարմար է յ շին զիցիկ տեսարանը հրապուրէ զձեզ հաճիք այցելել Հիմայ հոն հաստական զբայներ և այլն և այլն:

S. & N. D. MERHIGE & Co.

92 WASHINGTON ST., NEW YORK.

ՎԱՃԱՍԱԿԱՆ ԿԱՆԻՔ

Հին և նոր ամեն տեսակ գէնքերու, Դազգիական գոհարեղէններու թէ՛ իրական և թէ՛ նմանութիւն: Կը վաճառեն արևելեան և տաճկական ամէն տեսակ ստեղծագործներ, սեղանի, դաշնակի, մէնթըլի ևն. ծածկողներ անկիւնի և մետաքսահիւս: Դամասկի մետաքսէ և մանածէ վարագոյրներ, Հալէպի ապապանի, քիֆիաներ ևն:

Հայ և հաստակներ ինչպէս նաև հայ խանութի պաններն ու Վաճառականները արժէքը ունենան այս կարգի ապրանքներն: 10 աւ 100 շահելէ գատ, գնէ պիտի մնան այս ծանօթ վաճառատունէն գներով: Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք թիւ 92 Մուրնի կը կատարուին:

ՀԵՆՐԻԻ

ԱՍԻԼԵԼՈՒ ՈՒ ՄԱՋ ԿՏՐԵԼՈՒ ԵՒ ԵՐ

Թիւ 200 Իսթ 27րդ փողոց, Ն. Ե.

Տաք և պաղ բազանիքներ

Շարաթ և Կերակրութիւն րէ զատ ուրիշ օր բազանիք և զկողները թէ կրնան երկարժամ

մանակ վայելի և թէ փոքր շահ մը ընել: Հեղ թիքեթի համար վճարելով մէկ տոլար միայն: Սա թիքեթներն Շարաթ ու Կիրակի օրեր չեն ընդգրկուիր:

ՅԱՎՈՐ ԲԱՐԱԿԱՆ

Ամերիկեան և Արևելեան ընդհանուր

Նպարավաճառ-Կրօքրիս

Թիւ 45 Էքսչէնճ փողոց, Ուսթըր:

Կը ծանուցանէ թէ գներու շափաւորութեան և նպարեղէններու ընտիր տեսակի մասին կը գերազանցեանք Նպարավաճառներն: